

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՏՆՕՐԻՆՉԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿՁԲՈՒՆՔԻ ԳՈՐԾԱՌՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ

ՎԱՅԵ ՀՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

Դատական ակտերի վերաքննության դատավարական ձևի առանձնահատկությունները առավելապես դրսևորվում են վերաքննիչ վարույթում քաղաքացիական դատավարության սկզբունքների սահմանափակ գործողությամբ: Դատական ակտերի վերաքննությանը նվիրված մասնագիտական գրականության մեջ հիմնականում ուշադրության են արժանացել տնօրինչականության, մրցակցության և կողմերի իրավահավասարության սկզբունքները, քանի որ հենց այս սկզբունքներով են պայմանավորված դատարանի և վերաքննիչ բողոքարկման իրավունքով օժտված անձանց քաղաքացիադատավարական գործունեության բնույթն ու բովանդակությունը¹: Ընդ որում, քաղաքացիական դատավարության դատարանակազմական սկզբունքների ուսումնասիրությունն այս տեսանկյունից նպատակահարմար չէ, քանի որ դրանք առավելապես ընդգրկում են դատական գործունեության կազմակերպման հարցեր և հավասարապես վերաբերում են թե՛ քաղաքացիական, թե՛ քրեական և վարչական դատավարություններին, քաղաքացիական դատավարության բոլոր փուլերին²: Ուստի, վերաքննության դատավարական ձևի առանձնահատկությունների բացահայտման համար առաջնահերթ ուշադրություն պետք է դարձնել քաղաքացիական դատավարության հիմնական գործառնության սկզբունքներից մեկի՝ տնօրինչականության սկզբունքի դրսևորումներ:

Ա. Գ. Պլեշանովը նշում է, որ տնօրինչականության սկզբունքը կարելի է դիտարկել որպես շահագրգիռ անձի խախտված կամ վիճարկվող իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ձևի ու եղանակի ընտրության ազատությունն արտահայտող հիմնարար գաղափար, որը ներառում է նաև քաղաքացիական դատավարության իրավակիրառման տարբեր փուլերում վեճի և գործով վարույթի հետագա ճակատագրի որոշման

¹ Տե՛ս **Шишкин С. А.** Состязательность в гражданском и арбитражном судопроизводстве. М., 1997, էջ 23, 96-103, **Базаров Б.** При апелляционном производстве возможно нарушение принципа состязательности // «Российская юстиция», 2002, № 3, էջ 42, **Полянская Н. Ю.** Реализация принципа диспозитивности в механизме гражданского процессуального регулирования: Автореф. дис. ... канд. юрид. наук. Саратов, 2000, **Шананин А. А.** Принцип диспозитивности гражданского процессуального права: Автореф. дис. ... канд. юрид. наук. Саратов, 1999, էջ 5-22:

² Տե՛ս **Ռ. Գ. Պետրոսյան**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, Եր., 2007, էջ 158-162:

հնարավորությունը³: Իրավաբանական գրականության մեջ տնօրինչականության սկզբունքը բնութագրվում է որպես քաղաքացիական դատավարության շարժը կանխորոշող հիմնական և անվերապահ միջոց, թեև դրա հասկացության և իրավաբանական բնույթի վերաբերյալ մոտեցումները տարբերվում են⁴:

Նախևառաջ, վերաքննության փուլում տնօրինչականության սկզբունքի սկզբնական դրսևորումը ենթադրում է օրենքով սահմանված կարգով վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրականացումը՝ վերաքննիչ դատարան դիմելու հնարավորության իրացումը: Այսպես, Ս. Վ. Մոխենը տնօրինչականության շրջանակներում է դիտարկում դատարան դիմելու իրավունքի իրացումը, որն իրականացվում է իրավասու սուբյեկտի կողմից առաջին ատյանի դատարան հայցադիմում կամ դիմում ներկայացնելու, իսկ վերաքննիչ կամ վճռաբեկ ատյաններ՝ բողոք բերելու միջոցով⁵: Այսինքն՝ վերաքննիչ բողոքարկումը, հանդիսանալով դատական պաշտպանության իրավունքի անքակտելի բաղադրիչ, դատարան դիմելու իրավունքի իրականացման ձև, միաժամանակ կանխորոշում է դատավարության զարգացման հետագա ընթացքը⁶: Եթե տնօրինչական ենթ համարում վեճի օբյեկտը տնօրինելուն ուղղված գործողությունները⁷, ապա վերաքննիչ բողոքարկմամբ իրավասու սուբյեկտը օրենքով սահմանված կարգով դրսևորում է գործի քննությունը վերադաս դատական ատյան տեղափոխելու իր կամահայտնությունը, ինչի հետևանքով առաջին ատյանի դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ չի մտնում, և նյութական իրավահարաբերությունները մնում են վիճելի: Հետևաբար, *վերաքննիչ դատարան դիմելը տնօրինչական գործողություն է, որի շրջանակներում բողոքարկողը որոշում է իր խախտված կամ վիճարկվող սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության ձևն իրացնելու հարցը, այն է՝ դատական ակտի օրինա-*

³ Стѹ Плешанов А. Г. Диспозитивное начало в сфере гражданской юрисдикции: проблемы теории и практики. М., 2002, էջ 94:

⁴ Стѹ Васьковскій Е. В. Курс гражданского процесса. Т. 1. М., 1913, էջ 366, «Советский гражданский процесс». М., 1967, էջ 34, Викут М. А., Зайцев И. М. Гражданский процесс России. Учебник. М., 2001, էջ 45, Шананин А. А. Գշվ. աշխ., էջ 18, Боннер А. Т. Принципы гражданского процессуального права (проблемы и перспективы) // «Проблемы защиты прав и законных интересов граждан и организаций». Краснодар, 2002, Щеглов В. Н. Принципы искового производства // «Вопросы теории и практики гражданского процесса». Саратов, 1976, էջ 34, Пятилетов И. М. Распоряжение сторон гражданскими материальными и процессуальными правами в суде первой инстанции: Автореф. дис. ...канд. юрид. наук. М., 1970, էջ 8, «Советский гражданский процесс». М., 1976, էջ 48, Козлов А. Ф. Полномочия суда первой инстанции по привлечению к участию в рассмотрении гражданского дела заинтересованных лиц // Сборник ученых трудов Свердловского юридического института. Вып. 12, Свердловск, 1970, էջ 109, П. Ф. Елисейкин П. Ф. Предмет и принципы советского гражданского процессуального права. Ярославль, 1974, էջ 90, Ярошенко Т. В. Принцип диспозитивности в современном российском гражданском процессе: Автореф. дисс. ...канд. юрид. наук. М., 1998, էջ 15:

⁵ Стѹ Моисеев С. В. Принцип диспозитивности арбитражного процесса (понятие и отдельные распорядительные действия в суде первой инстанции). М., 2008, էջ 50–51:

⁶ Стѹ Гурвич М. А. Гражданские процессуальные правоотношения и процессуальные действия // «Труды ВЮЗИ». М., 1965, Т. 3, էջ 74–105, Мельников А. А. Советский гражданский процессуальный закон. Вопросы теории гражданского процессуального права. М., 1973, էջ 94–96:

⁷ Стѹ Ռ. Գ. Պետրոսյան, Գշվ. աշխ., էջ 174–176:

կանությունը և հիմնավորվածությունը ստուգելու միջոցով, և կարգը, մասնավորապես, թե ինչ պահանջ է ներկայացնում վերաքննիչ դատարան դատական ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելու, մասնակիորեն բեկանելու և փոփոխելու, բեկանելու և գործի վարույթը կարծելու կամ էլ օրենքով նախատեսված ցանկացած այլ պահանջ:

Վերաքննիչ վարություն տնօրինչականության սկզբունքի գործողությունը պայմանավորված է գործին մասնակցող անձանց դատավարական վարքագծի և վերաքննիչ դատարանի լիազորությունների սահմաններով: Այս առումով իրավաբանական գրականության մեջ ձևավորվել են միմյանց հակադրվող երկու տարբեր մոտեցումներ: Մասնավորապես, Ե. Ա. Բորիսովան նշում է, որ վերաքննիչ վարություն տնօրինչականության սկզբունքը դրսևորվում է ողջ ծավալով, քանի որ վերաքննիչ դատարանը կաշկանդված է վերաքննիչ բողոքի սահմաններով և կարող է բողոքի սահմաններից դուրս գալ միայն բացառիկ դեպքերում⁸: Այս տեսակետին հակադրվում է Ա. Ա. Շանանինը, որի կարծիքով՝ օրինականության սկզբունքի պահպանման համար վերաքննիչ դատարանին պետք է օժտել վերաքննիչ բողոքի շրջանակներում ընդգրկված պահանջներին սեփական նախաձեռնությամբ անդրադառնալու և իրավական գնահատական տալու իրավասությամբ, ինչը տնօրինչականության սահմանափակման դրսևորումներից է⁹:

Նշված երկու հեղինակների տեսակետների հետ համաձայն չենք, քանի որ վերաքննության փուլում տնօրինչականության սկզբունքի գործառության առանձնահատկությունները պայմանավորված են վերաքննության տեսակով: Ընդ որում, անկախ քաղաքացիական դատավարությունում կիրառվող վերաքննության տեսակից, վերաքննության փուլում տնօրինչականության սկզբունքի գործառությունը տարբերվում է առաջին ատյանի դատարանում տնօրինչականության դրսևորումներից, ինչը պայմանավորված է երկրորդ ատյանի դատարանում գործի (բողոքի) քննության կամ դատական ակտի վերանայման սահմանները պահպանելու անհրաժեշտությամբ: Այսպես, լրիվ վերաքննության պարագայում գործին մասնակցող անձինք զրկված են երկրորդ ատյանում մի շարք տնօրինչական գործողություններ կատարելու հնարավորությունից, օրինակ՝ չեն կարող փոխել հայցի հիմքը կամ առարկան, փոփոխել հայցային պահանջների չափը, հրաժարվել հայցից և այլն:

Գործող իրավակարգավորման պայմաններում վերաքննության փուլում տնօրինչականության սկզբունքն ունի գործառության հետևյալ առանձնահատկությունները՝

- վերաքննիչ դատարանը կաշկանդված լինելով վերաքննիչ բողոքի հիմքերով և հիմնավորումներով, կարող է վերանայել միայն դատական ակտի բողոքարկված մասը, այսինքն՝ վերաքննության սահմանները կանխորոշված են վերաքննիչ բողոքարկման իրավունքով օժտված սուբյեկտի կամահայտնությամբ. նա է որոշում՝ ինչ մասով բողոքարկի դատական ակտը, որն էլ իր հերթին պայմանավորում է, թե ինչ մասով դատական ակ-

⁸ Стен Борисова Е. А. Апелляция в гражданском (арбитражном) процессе. М., 2000, էջ 55:

⁹ Стен Шананин А. А., նշվ. աշխ., էջ 18:

տը պետք է մտնի օրինական ուժի մեջ: Ընդ որում, վերաքննության փուլում տնօրինչականության դրսևորումն այս իմաստով ավելի լայն է, եթե համեմատելու լինենք վճռաբեկ վարույթի հետ: Մասնավորապես, վճռաբեկության կանոններով վճռաբեկ բողոքարկման սահմանները պայմանավորված են բացառապես դատական ակտի անբարենպաստ հետևանքներով, այն է՝ ՔԴՕ 224 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը կարող է վճռաբեկ բողոք բերել դատական ակտի՝ միայն իր համար անբարենպաստ մասի դեմ: Այսինքն՝ օրենսդրորեն ամրագրվել է վճռաբեկ բողոքարկման ձևական սահմանափակում, քանի որ բոլոր դեպքերում, մեր կարծիքով, բողոքարկումը կարող է պայմանավորված լինել միայն դատական ակտի ուղղակի կամ անուղղակի անբարենպաստ հետևանքներով: Մի դեպքում դատական ակտի անբարենպաստ իրավական հետևանքները գործին մասնակցող անձի համար վրա են հասնում անմիջականորեն, մյուս դեպքում՝ դատական ակտը հետագայում կարող է բացասաբար ազդել վերջինիս իրավունքների և պարտականությունների վրա:

- Վերաքննիչ դատարանը, կաշկանդված լինելով վերաքննիչ բողոքի սահմաններով, կաշկանդված չէ բողոքում ներկայացված պահանջով և իր լիազորություններից օգտվում է օրենքով սահմանված կարգով՝ ըստ դատական պաշտպանության իրավունքի իրականացման, դատական գործունեության նպատակահարմարության և արդարադատության արդյունավետության¹⁰: Այս առումով վերաքննության փուլում տնօրինչականության դրսևորումն ավելի լայն է, եթե համեմատելու լինենք առաջին ատյանի դատարանում տնօրինչականության սկզբունքի գործողության հետ: Այսպես, ՔԴՕ 131 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ դատարանը վճիռ կայացնելիս որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը, ուստի դատարանն ինքնըստինքյան կաշկանդված է հայցային պահանջներով: Մինչդեռ վերաքննության պարագայում դատարանը վերաքննիչ բողոքի պահանջով կաշկանդված չէ:

Մեր կարծիքով, դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերի առկայության պարագայում դատարանը պետք է կաշկանդված չլիներ նաև վերաքննիչ բողոքի հիմքերով և հիմնավորումներով, սակայն ներկայիս դատական պրակտիկան շեղվում է առաջարկվող մոտեցումից: Բացի այդ, վերաքննիչ դատարանը կաշկանդված չէ ստորադաս ատյանի դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելու արդյունքում ՔԴՕ 221 հոդվածի 1-ին մասով նախատեսված որոշակի դատավարական գործողություններ կատարելու պահանջով, որը չի ներառում գործին մասնակցող անձանց միջնորդությամբ վերաքննության փուլում մասնավոր հարցերի վերաբերյալ որոշում կայացնելու հնարավորությունը: Մասնավորապես, թիվ 3-734/ՎԴ քաղաքացիական գործով բողոքաբերը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանին միջնորդել էր «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21 հոդվածի ա) կետի ուժով ազատել պետական տուրքի վճարումից, մինչդեռ դատարանը որոշում էր կայացրել

¹⁰ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՏԴ3/0026/02/08 քաղաքացիական գործով 26.06.2009 թ. որոշումը:

պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին: ՀՀ վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31 հոդվածի դ) ենթակետը, որի համաձայն՝ առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնություններ կարող են սահմանել դատարանները կամ դատավորները՝ ելնելով կողմերի գույքային դրույթունից, գտել է, որ նման արտոնությունների սահմանումն ուղղված է Եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածի 1-ին մասով և ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ յուրաքանչյուր անձի դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացմանը: Քանի որ բողոքաբերները ներկայացրել են «Պետական տուրքի վճարումից ազատելու մասին» միջնորդություն, որը բխում էր իրենց գույքային դրույթունից և որպես պետական տուրքի գծով արտոնություն կարող էր սահմանվել դատարանի կողմից, վերաքննիչ դատարանն առանց որևէ իրավական հիմքի, այն է՝ առանց «Պետական տուրքի վճարումը տարաժամկետելու մասին» միջնորդության՝ տարաժամկետել էր պետական տուրքի վճարումը, որով և *խախտել էր գործին մասնակցող անձանց դատավարական իրավունքների իրականացման տնօրինչականության սկզբունքը*¹¹:

ՀՀ վճռաբեկ դատարանը միաժամանակ արձանագրել է, որ դատական պաշտպանության իրավունքը կարող է սահմանափակվել, սակայն կիրառվող սահմանափակումները չպետք է լինեն այն աստիճանի, որ խեղաթյուրեն այդ իրավունքի բուն էությունը: Սահմանափակումն անհամատեղելի կլինի Կոնվենցիայի 6 հոդվածի 1-ին կետի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի, և եթե ողջամիտ հավասարակշռված կապ չլինի գործադրվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև (ՀՀ վճռաբեկ դատարանի 14.04.2008 թվականի թիվ 3-365 (ՎԴ) քաղաքացիական գործով որոշում, «Պայքար և Հաղթանակ ՍՊԸ-ն» ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 20.12.2007 թ. թիվ 21638/03 որոշում, կետ 44):

- Վերաքննիչ բողոք ներկայացնողը կարող է մինչև վերաքննիչ դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը հետ վերցնել այն (ՔԴՕ հոդված 213, մաս 1, կետ 3) կամ բողոքը վարույթ ընդունելուց հետո մինչև գործի քննությունը սկսելն իրավունք ունի հետ վերցնելու բողոքը, որի հետևանքով վերաքննիչ դատարանը վերաքննիչ վարույթը կարճելու մասին որոշում է կայացնում, եթե դատական ակտը չեն բողոքարկել այլ անձինք (ՔԴՕ հոդված 215, 1-ին և 2-րդ մասեր): Ինչպես տեսնում ենք, տնօրինչական այս գործողությունը սահմանափակված է վերաքննության փուլերով և տարբերվում է իրավական հետևանքների առաջացման առումով: Մասնավորապես, մինչև վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը բողոքը հետ վերցնելու դեպքում վերաքննիչ դատարանը կայացնում է բողոքը վերադարձնելու մասին որոշում, ինչը արգելակում է վերաքննության վարույթի հարուցումը: Այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը բողոքն ընդունել է վարույթ, սակայն դեռևս չի սկսել դրա քննությունը, բողոքը հետ վերցնելը հանգեցնում

¹¹ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-734/ՎԴ քաղաքացիական գործով 28.11.2008 թ. որոշումը:

է գործի վարույթը կարճելուն, եթէ դատական ակտը չեն բողոքարկել այլ անձինք: *Ընդ որում, վերաքննիչ բողոքը հետ վերցնելը՝ որպէս տնօրինչական գործողություն, հնարավոր է իրականացնել մինչև վերաքննիչ դատարանի կողմից բողոքի քննությունն սկսելը, և փաստացի սահմանափակված է վերաքննության վարույթի հարուցման և նախապատրաստման փուլերով:*

Գտնուն ենք, որ վերաքննիչ բողոքը հետ վերցնելու՝ ՔԴՕ 215 հոդվածով նախատեսված իրավակարգավորումը թերի է: Սասնավորապես, հողվածի համակարգային վերլուծությունից պարզ է դառնում, որ բողոքաբերը զրկված է վերաքննիչ բողոքից մասնակիորեն իրաժարվելու հնարավորությունից, մինչդեռ գործնականում հնարավոր է, որ անձը բողոքարկի առաջին ատյանի դատարանի՝ մի քանի պահանջներով կայացված վճիռը և գործի քննության ընթացքում բողոքից մասնակիորեն իրաժարվելու հնարավորություն ունենա: Մեր կարծիքով, իրավակարգավորման նման թերությունը պայմանավորված է քննարկվող հողվածի ոչ ճիշտ ձևակերպմամբ, քանի որ «բողոքը հետ վերցնելն» ինքնին հանգեցնում է բողոքից ամբողջությամբ իրաժարվելուն: ***Առաջարկում ենք բողոքարկողի՝ բողոքը հետ վերցնելու իրավունքն ամրագրել մինչև վերաքննիչ դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը, որի իրավական հետևանքը բողոքը դատարանի կողմից վերադարձնելն է, իսկ ՔԴՕ 215 հոդվածում ամրագրել վերաքննիչ բողոքից ամբողջությամբ կամ մասնակիորեն իրաժարվելու ինստիտուտը, որը կհանգեցնի վերաքննիչ ատյանի կողմից վարույթն ամբողջությամբ կամ մասնակիորեն կարճելու, եթէ դատական ակտը չի բողոքարկվել այլ անձանց կողմից:***

• Վերաքննիչ բողոք բերողը չի կարող փոխել բողոքի հիմքերն ու հիմնավորումները, փոփոխել բողոքում ներկայացված պահանջը: Ընդ որում, տնօրինչական այս գործողությունների սահմանափակումը գործում է նույնիսկ մինչև վերաքննիչ դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը: Այսպես, ՔԴՕ 213 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ բողոքաբերն իրավունք ունի մինչև վերաքննիչ դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելու մասին որոշման կայացումը հետ վերցնելու բողոքը: Դրա տրամաբանական շարունակությունը պետք է լիներ բողոքն օրենքով սահմանված ժամկետում կրկին ներկայացնելու հնարավորության ամրագրումը, մինչդեռ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքը միայն ՔԴՕ 210 հոդվածի կանոնները խախտելու հիմքով (չեն պահպանվել բողոքի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները) վերադարձնելուց հետո է հնարավոր բողոքում թույլ տրված խախտումները վերացնել և վերադարձնելու մասին որոշումը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում այն կրկին ներկայացնել դատարան: Այսինքն՝ օրենսդրորեն անձն ուղղակիորեն զրկված է մինչև վերաքննիչ վարույթի հարուցումը հետ վերցրած բողոքը կրկին դատարան ներկայացնելու հնարավորությունից: Պետք է նկատի ունենալ, որ քաղաքացիական դատավարության սկզբունքների գործողությունը, ավելին՝

դրանց սահմանափակման դրսևորումները կարող են կիրառվել միայն հարուցված վարույթի, այսինքն՝ իրականացվող դատավարության պայմաններում: Մինչդեռ օրենսդիրն այս հարցի իրավակարգավորումը սահմանելիս առաջնորդվել է այլ սկզբունքով:

Մեր կարծիքով, վերաքննիչ բողոքի հիմքերն ու հիմնավորումները, այսինքն՝ բողոքի առարկան փոխելու վերաբերյալ տնօրինչական գործողությունների սահմանափակումները կարող են կիրառվել միայն արդեն իսկ հարուցված վերաքննության պայմաններում: **Գտնում ենք, որ մինչև վերաքննիչ դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը բողոքաբերի կողմից բողոքը հետ վերցնելու պարագայում 33 ՔԴՕ 213 հոդվածի 3-րդ մասի ուժով պետք է ամրագրել վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը ստանալու պահից երկշաբաթյա ժամկետում այն կրկին դատարան ներկայացնելու հնարավորությունը:**

Անձը վերաքննիչ բողոքի հիմքերն ու հիմնավորումները, բողոքի առարկան փոխելու հնարավորությունից կարող է զրկվել միայն արդեն իսկ հարուցված վարույթի պայմաններում: Հակառակ պարագայում անհարկի սահմանափակվում են բողոքաբերի իրավունքները: Մասնավորապես, անձը վերաքննիչ բողոք ներկայացնելուց հետո կարող է պարզել, որ իր շահերից և սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության արդյունավետությունն ապահովելու անհրաժեշտությունից է բխում այլ պահանջով հանդես գալը, կամ կարող է պարզել, որ բողոքում չի ընդգրկել այնպիսի հարցեր, որոնց վերաբերյալ դիրքորոշում է հայտնել առաջին ատյանի դատարանում, կամ ընդհակառակը՝ բողոքում նշել է հարցեր, որոնց վերաբերյալ ստորադաս ատյանում դիրքորոշում չի հայտնել: Նման պարագայում առավել նպատակահարմար է մինչև վերաքննության վարույթ հարուցելը բողոքաբերին վերաքննիչ բողոքում փոփոխություններ կատարելու հնարավորություն ընձեռել: Ճիշտ է, առկա իրավակարգավորումն ավելի է բարձրացնում վերաքննիչ բողոքարկման իրավունքով օժտված սուբյեկտների պատասխանատվությունը և նպաստում է, որ վերջիններս ավելի շրջահայացորեն տնօրինեն իրենց վերապահված բողոքարկման իրավունքը, ինչն իր հերթին բարձրացնում է դատական գործունեության արդյունավետությունը, սակայն այս ամենը չի կարելի ապահովել դատավարական իրավահարաբերությունների հիմնական մասնակիցների իրավունքների հաշվին: Նույնը վերաբերում է ՔԴՕ 213 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքին, այն է՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե գործին մասնակցող անձանց միջև առկա է վերաքննության իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնություն, և նման համաձայնություն կնքած մյուս կողմը համաձայնության չի եկել գործը վերաքննիչ դատարանում քննելու վերաբերյալ: Գործնականում չենք կարող բացառել վերաքննիչ բողոքը վերադարձվելուց հետո բողոքաբերի կողմից երկշաբաթյա ժամկետում գործին մասնակցող մյուս անձի համաձայնությունը ստանալու և բողոքը վերաքննիչ դատարան կրկին ներկայացնելու հնարավորությունը:

- Վերաքննության փուլում չեն գործում վերաքննիչ բողոքն ընդունե-

լու կանոնները: Մասնավորապես, ՔԴՕ 212 հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ գործին մասնակցող անձը վերաքննիչ բողոքի պատճենն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, իրավունք ունի ներկայացնելու բողոքի պատասխան, որտեղ նշվում են բողոքի հիմքերի և հիմնավորումների (այլ ոչ թե ներկայացված պահանջի) վերաբերյալ դիրքորոշումը և դրա հիմնավորումները: Վերաքննիչ բողոքը ներկայացվում է առաջին ատյանի դատարանի դատական ակտի դեմ, իսկ բողոքում ներկայացված պահանջն ուղղված է վերաքննիչ դատարանին և հանգում է դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելու արդյունքում այն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելուն, մասնակիորեն բեկանելուն և փոփոխելուն կամ ՔԴՕ 221 հոդվածով նախատեսված դատավարական այլ գործողություններից մեկը կատարելուն: Վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջն անմիջականորեն ուղղված չէ գործին մասնակցող անձի դեմ, հետևաբար վերջինս չի կարող այն ընդունելու կամ չընդունելու վերաբերյալ դիրքորոշում արտահայտել:

- Վերաքննության փուլում կողմերը զրկված են նաև վեճն արբիտրաժային դատարանի լուծմանը հանձնելու հնարավորությունից: Այսպես, ՀՀ ՔԴՕ 18 հոդվածի համաձայն՝ դատարանին ընդդատյա վեճը մինչև գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելը կողմերի համաձայնությամբ կարող է հանձնվել արբիտրաժային տրիբունալի լուծմանը: Վերաքննության ընթացքում գործ ունենք գործն ըստ էության լուծող արդեն իսկ կայացված դատական ակտի վերանայման իրողության հետ, և ՔԴՕ 103 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ արբիտրաժային համաձայնության վրա կատարված հղումը հայցն առանց քննության թողնելու հիմք է, իսկ վերաքննիչ դատարանը ՔԴՕ 221 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի ուժով հայցը կարող է առանց քննության թողնել միայն այն դեպքում, երբ առանց քննության թողնելու հիմքն առկա է եղել առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ, և դատարանը դրսևորել է ոչ իրավաչափ վարքագիծ, այսինքն՝ այդ մասին համապատասխան որոշում չի կայացրել: Ուստի, վերաքննիչ վարույթի ընթացքում վեճն արբիտրաժային դատարանի լուծմանը հանձնվել չի կարող, քանի որ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, իսկ վերաքննիչ դատարանն էլ զրկված է վերաքննության փուլում կնքված արբիտրաժային համաձայնության հիման վրա հայցն առանց քննության թողնելու հնարավորությունից:

- Վերաքննության փուլում կողմերն ազատ են հաշտության համաձայնություն կնքելու հարցում: ՀՀ ՔԴՕ 33 հոդվածը սահմանում է, որ կողմերը դատավարության ցանկացած փուլում կարող են գործն ավարտել հաշտության համաձայնությամբ, որը ձևակերպվում է գրավոր: Դատարանը նախքան հաշտության համաձայնությունը հաստատելը կողմերին պարզաբանում է դրա դատավարական հետևանքները: Դատարանը չի հաստատում հաշտության համաձայնությունը, եթե այն հակասում է օրենքին և այլ իրավական ակտերին կամ խախտում է այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը: Հոդվածի բովանդակությունից հստակորեն բխում է, որ կողմերը հաշտության համաձայնություն կարող են կնքել թե՛ վերաքննության, թե՛ վճռաբեկության փուլերում: Ընդ որում, դատավարու-

թյունը հաշտությամբ ավարտելու կողմերի կամահայտնությունը պարտադիր է վերաքննիչ դատարանի համար, որն այս պարագայում ՔԴՕ 221 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի ուժով ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է գործն ըստ էության լուծող դատական ակտը և հաստատում է հաշտության համաձայնությունը: Հաշտության համաձայնությունը վերաքննիչ վարույթում այլ դատավարական հետևանք է առաջացնում, եթե համեմատելու լինենք առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ կնքված հաշտության համաձայնության հետ: Մասնավորապես, ՀՀ ՔԴՕ 109 հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե հաստատել է կողմերի կնքած հաշտության համաձայնությունը: Մինչդեռ վերաքննիչ վարույթում հաշտության համաձայնության կնքումը գործի վարույթը կարճելու դատավարական հետևանք չի առաջացնում, այլ վերաքննիչ դատարանին պարտավորեցնում է զուտ օրենքի պահանջներին համապատասխանող հաշտության համաձայնությունը հաստատելու մասին որոշում կայացնել: Վերաքննիչ վարույթը կարճելու՝ դատարանի պարտականությունը պայմանավորված է միայն ՔԴՕ 215 հոդվածով սահմանված կարգով բողոքաբերի կողմից վերաքննիչ բողոքը հետ վերցնելու հանգամանքով:

Ինչպես տեսնում ենք, վերաքննիչ վարույթում տնօրինչականության սկզբունքը ենթադրում է գործին մասնակցող անձանց միակողմանի կամ փոխադարձ կամահայտնությամբ պայմանավորված՝ վերաքննիչ դատարանի կողմից որոշակի դատավարական որոշողություններ կատարելու պարտականություն: Վերաքննության փուլում տնօրինչականության դրսևվորումներն էապես տարբերվում են առաջին ատյանի դատարանում տնօրինչականության սկզբունքի որոշողությունից, այսինքն՝ հիմնականում կրում են սահմանափակ բնույթ, իսկ երբեմն վերաքննիչ դատարանին է վերապահվում բողոք բերողի կամահայտնությամբ կաշկանդված չլինելու դատավարական հնարավորությունը:

ВАГЕ ОГАНЕСЯН – Гражданско-процессуальные особенности действия принципа диспозитивности на этапе апелляционного пересмотра судебных актов. – В статье проанализированы особенности функционирования принципа диспозитивности на этапе апелляционного производства в гражданском процессе РА. Подробно рассмотрены все процессуальные действия, относящиеся к данному принципу, и раскрыты его отдельные составляющие. В результате выяснено, что принцип диспозитивности по-разному действует в суде первой инстанции и в апелляционном производстве. Некоторые диспозитивные действия в апелляционном производстве осуществляются другим процессуальным порядком по сравнению с судом первой инстанции. Выделены действия диспозитивного характера в апелляционном производстве и уточнены все процессуальные особенности, проанализированы нормы Гражданского процессуального кодекса РА, предусматривающие действия диспозитивного характера в апелляционном производстве. Кроме того, выявлены недостатки в правовом регулировании данного вопроса и предложены варианты их устранения.

VAHE HOVHANNISYAN – *Civil procedural peculiarities of functioning of the principle of disposition at the judicial acts' review stage.* – Present article is devoted to the analysis of the peculiarities of functioning of the principle of disposition at the review stage in civil procedure. The author has introduced the procedural activities constituting the content of this principle, revealed its particular elements, which enabled to explain the differences of functioning of the principle of disposition between the court of first instance and review procedure. Several dispositive activities at review procedure have been found to be performed within different procedural content in comparison with those at the court of first instance. Also, generally they are of limited nature and in some cases have specific procedural effects. The author has distinguished the dispositive activities performed at the appealation instance as well as explained their procedural description. Also, the provisions of the Civil Procedural Code of RA envisaging dispositive activities at review procedure have been analyzed which enabled to reveal several shortcomings of legal regulation of the issue at stake, and corresponding suggestions have been drawn up.